ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2023 թվականի մարտի 16-ի թիվ 3 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/09»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/09» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ չափաբաժինների վերաբերյալ 14.03.2023թ. ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 16.03.2023թ. տրամադրված պարզաբանումները՝

1. <u>Հարցադրում</u>

«Հարգելի գործընկեր կխնդրեի մի քանի պարզաբանում անել հետևյալ չափաբաժինների վերաբերյալ Հստակեցրեք խնդրեմ՝ 1-ին չափաբաժին-ապակու գույնը 2-րդ չափաբաժին-պրոֆիլի տեսակը կամ կոդը, քանի որ 18մմ հաստությամբ լամինատի համար նախատեսված պրոֆիլները երկուսն են 1115 և 1040 կոդերով, կամ մի գուցե ընդունելի տարբերակ է նաև 1 մմ հաստությամբ PVC եզրաժապավենը, որը ավելի հաճախ է օգտագործվում նման դեպքերում և ավելի հուսալի է: 3-րդ չափաբաժին-գրված է ՄԴՖ-ի պրոֆիլներով՝ 3,5-4սմ հաստությամբ: Մի գուցե ի նկատի ունեք 3մմ հաստությամբ 336 կոդով պրոֆիլը, որը հնարավոր է փակցնել 18մմ լամինատի եզրերին հաստացումից հետո: Եվ եթե դա հնարավոր է սեղանի երեսի պարագայում ապա անիմաստ է սեղանի ոտքի պարագայում չորս կողմից փակել այդ պրոֆիլով: Ուստի առաջարկում եմ նույն պրոֆիլը օգտագործել սեղանի ոտքի դիմային մասում: 4-րդ չափաբաժին-պրոֆիլի տեսակը ենթադրում եմ 1041 կոդն է, կամ նման լինի 336 կոդով 3,6մմ-անոց պրոֆիլին:»

<u>Պարզաբանում</u>

««ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/09» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին (Հավելված 5) կից ներկայացված տեխնիկական բնութագրով՝ 1-ին չափաբաժնով նախատեսված ապրանքի մասով ապակու գույն սահմանված չէ, ապակին կարող է լինել ցանկացած գույնի:

2-րդ, 3-րդ, 4-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մասով հրավերի պայմանագրի նախագծին (Հավելված 5) կից ներկայացված տեխնիկական բնութագրով պրոֆիլի կոդի մասով սահմանափակումներ նախատեսված չեն, առաջարկվող ապրանքները պետք է համապատասխանեն հիշյալ տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին:

Միաժամանակ ներկայացված առաջարկները կքննարկվեն հետագայում նմանատիպ ապրանքների կարիքի առաջացման պարագայում՝ դրա բավարարման նպատակով կազմակերպվելիք գնման ընթացակարգերի շրջանակում:»

2. Հարցադրում

«Հարգելի գործընկեր կխնդրեմ պարզաբանում տրամադրել մի քանի չափաբաժինների մասով մասնավորապես՝ Հստակեցրեք խնդրեմ 1-ին չափաբաժին-ապակու գույնը 2-րդ չափաբաժին-պրոֆիլի տեսակը կամ եթե հնարավոր է կոդը քանի որ 18մմ լամինատի համար նախատեսված պրոֆիլները 2-ն են 1115 և 1040 կոդերով: Կամ մի գուցե ընդունելի տարբերակ է նաև 1մմ հաստությամբ PVC եզրաժապավենը, որը ավելի հաճախ է կիրառվում և ավելի հուսալի է տվյալ դեպքերում: 3-րդ չափաբաժին-բնութագրում գրված է 3,5-ից 4սմ հաստությամբ պրոֆիլ: Մի գուցե ի նկատի ունեք 3մմ հաստությամբ և 36մմ լայնությամբ 336 կոդոֆ պրոֆիլը՞: Այն փակցվում է սեղանների կողեզրերին՝ սեղանի երեսները հաստացնելուց հետո: Եվ եթե դա հնարավոր է կիրառել սեղանի երեսի պարագայում, ապա անիմաստ է դառնում տվյալ տեխ բնութագրում նշված սեղանի ոտքի պարագայում: Նշված է ոտքի 4 կողմից եզրակալված պրոֆիլով: Առաջարկում եմ նույն պրոֆիլը փակցնել սեղանի ոտքի դիմային հատվածում՝ ինչը տեխնիկապես ավելի ճիշտ և կիրառելի է: 4-րդ չափաբաժին-պրոֆիլի տեսակը կամ կոդը:»

Պարզաբանում

««ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/09» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին (Հավելված 5) կից ներկայացված տեխնիկական բնութագրով՝ 1-ին չափաբաժնով նախատեսված ապրանքի մասով ապակու գույն սահմանված չէ, ապակին կարող է լինել ցանկացած գույնի:

2-րդ, 3-րդ, 4-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մասով հրավերի պայմանագրի նախագծին (Հավելված 5) կից ներկայացված տեխնիկական բնութագրով պրոֆիլի կոդի մասով սահմանափակումներ նախատեսված չեն, առաջարկվող ապրանքները պետք է համապատասխանեն հիշյալ տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին:

Միաժամանակ ներկայացված առաջարկները կքննարկվեն հետագայում նմանատիպ ապրանքների կարիքի առաջացման պարագայում՝ դրա բավարարման նպատակով կազմակերպվելիք գնման ընթացակարգերի շրջանակում:»

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/09» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Գայանե Դադիվանյանին:

Հեռախոս՝ 010 511-783:

Էլեկտրոնային փոստ՝ ddgnumner@mail.ru:

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/09» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: